

**ՄԻՆԵԵՎՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
(Գանգատ թիվ 77617/01)**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՎՃՈՒ**

**ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ**

Հուլիս 2006թ.

«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԴԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունում ներկայացված կարծիքները և ձևակերպումները հանդիսանում են էմիլ Բաբայանի աշխատանքը, ով ամբողջական պատասխանատվություն է կրում այս վերլուծության բովանդակության համար: Վերլուծությունը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության համար: Վերլուծության մեջ առկա կարծիքները և ձևակերպումները չպետք է դիտվեն որպես իրավական խորհրդատվություն որևէ կոնկրետ գործի համար: Սույն վերլուծությունը և դրանում առկա կարծիքները ունեն միայն տեղեկատվական և ուսումնական նպատակ: Վերլուծության մեջ բերված կարծիքները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ ներկայացնեն «Իրավական ուղեցույց» ՀԿ-ի կարծիքը:

Վերլուծության մշակմանը աջակցել է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպանատունը:

Վերլուծությունը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

© 2006 «Իրավական ուղեցույց» ՀԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
ՄԱՍ I. ՄԻՆԵԵՎՆ ԸՆԴԴԵՄ ՈՒԲԱԱՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ.....	5
Ա. Փաստերի համառոտ շարադրանք.....	5
Բ. Դիմումատուի գանգատը համաձայն Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի .....	8
Գ. Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռը.....	9
ՄԱՍ II. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	14

## Ներածություն

Սույն վերլուծության առարկան է հանդիսանում Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (այսուհետ՝ Եվրոպական Դատարան) *Միխեեվն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* գործով վճիռը՝ հրապարակված 2006 թվականի հունվարի 26-ին: Գործը վերաբերում է Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԴ) 3-րդ (խոշտանգումների արգելում) և 13-րդ (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք) հոդվածների խախտումներին:

Վերլուծության նպատակն է համակողմանիորեն վերլուծել գործի փաստերը՝ ներառյալ Դիմումատուի ներկայացրած գանգատները և դրանց ի պատասխան Ռուսաստանի Դաշնության կառավարության ներկայացրած փաստարկները: Վերլուծությունը նպատակ ունի նաև ներկայացնելու Եվրոպական Դատարանի մոտեցումները կապված խնդրո առարկա հանդիսացող իրավունքների և ազատությունների մեկնաբանությունների հետ:

Վերլուծությունն իր բնույթով ուսումնական է և գլխավորապես ստեղծվել է որպեսզի իրավաբան մասնագետներին, այդ թվում՝ դատավորներին, իրավաբաններին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, իրավաբան ուսանողներին և այլոց՝ ովքեր առնչություն ունեն մարդու իրավունքների պաշտպանությանը, հնարավորություն ընձեռի ծանոթանալու այն չափանիշներին, որոնց հետևում է Եվրոպական Դատարանը Եվրոպական Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների մեկնաբանման ժամանակ:

# ՄԱՍ I. ՄԻՆԵԵՎՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

## Ա. Փաստերի համառոտ շարադրանք

Ալեքսեյ Եվգենյեվիչ Միխեեվը (Դիմումատու), հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, ծնված 1976 թվականին և ապրում է Նիժնի Նովգորոդում (Ռուսաստան): Վիճարկվող ժամանակահատվածում նա աշխատում էր պետավտոտեսչությունում որպես ոստիկան:

1998 թվականի սեպտեմբերի 8-ին Դիմումատուն, չլինելով ծառայության մեջ, իր ընկերոջ՝ Ֆ-ի հետ Բոգորոդսկում (Նիժնի Նովգորոդի շրջան) հանդիպել է ՄՍ-ին, մի երիտասարդ աղջկա և տեղափոխել նրան Նիժնի Նովգորոդ իր մեքենայով:

1998 թվականի սեպտեմբերի 10-ին ՄՍ-ի մայրը հայտնել է ոստիկանությանը, որ իր աղջիկը անհետացել է:

Սեպտեմբերի 10-ին Դիմումատուն և իր ընկերը ձերբակալվել են Բոգորոդսկի ոստիկանության կողմից և հարցաքննվել կապված ՄՍ-ի անհետացման հետ և պահվել կալանքի տակ: Դեռևս այդ պահին նրանց պաշտոնական մեղադրանք առաջադրված չի եղել:

1998 թվականի սեպտեմբերի 10-ի երեկոյան, դեռևս լինելով ոստիկանությունում կալանքի տակ, Դիմումատուին է այցելում նրա վերադաս սպան և ստիպում նրան ստորագրել իր ոստիկանության համակարգից ազատվելու մասին հետին թվով կազմված դիմումը:

Միխեեվն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով դեպքերի և իրավական ընթացակարգի ժամանակագրությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

### Աղյուսակ 1

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	
11 Սեպտեմբեր 1998թ.	Ոստիկանությունը խուզարկում է Դիմումատուի բնակարանը, ամառանոցը և ավտոմեքենան և նրա մեքենայում հայտնաբերում է երեք փամփուշտ:
12 Սեպտեմբեր 1998թ.	Բոգորոդսկի երեք ոստիկանների կողմից Դիմումատուի և նրա ընկեր Ֆ-ի դեմ կազմվում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, այն մասին, որ իբր նրանք խանգարել են հասարակական անդորրը: Նույն օրը նրանք ենթարկվում են հինգ օրվա վարչական կալանքի:  Լինելով կալանքի տակ Բոգորոդսկի ոստիկանության բաժանմունքում Դիմումատուն մի քանի անգամ հարցաքննվել է ՄՍ-ի անհետացման վերաբերյալ: Սակայն Դիմումատուն ժխտել է իր մասնակցությունը ՄՍ-ի անհետացման գործում:
16 Սեպտեմբեր 1998թ.	Ոստիկանությունը քրեական գործ է հարուցում կապված Դիմումատուի մեքենայից գտնված երեք փամփուշտների հետ: Այս ընթացքում լրանում է վարչական կալանքի ժամկետը և Դիմումատուն արդեն կալանքի էր վերցվել կապված նրա դեմ հարուցված քրեական գործի հետ և տեղափոխվել էր այլ

	<p>մեկուսարան որը գտնվում էր Լենինսկի ոստիկանության բաժանմունքի իրավագործության տակ, որը և քննում էր քրեական գործը: Դիմումատուն պնդում է, որ տեղափոխումից հետո հարցաքննությունները դարձել էին ավելի հաճախակի և ագրեսիվ: Ոստիկանության աշխատակիցները ապտակել են նրան մի քանի անգամ և սպառնացել խոշտանգել նրան նպատակ ունենալով կորզել խոստովանություն, որ ինքն է սպանել ՄՍ-ին:</p> <p>Միևնույն ժամանակ Ֆ-ը (Դիմումատուի ընկերը) ոստիկաններին ցուցմունք է տալիս, որ ինքը տեսել է թե ինչպես է Դիմումատուն բռնաբարել ու սպանել ՄՍ-ին: Նա մատնանշել է այն վայրը, որտեղ նրանք իբր թե պահել են մարմինը, սակայն ոստիկանությունը նրա մատնանշած վայրում ՄՍ-ի մարմինը չի հայտնաբերել:</p>
<p><b>19 Սեպտեմբեր 1998թ.</b></p>	<p>Դիմումատուն հարցաքննվում է Լենինսկի ոստիկանության բաժանմունքում, մի քանի ոստիկանների և դատախազության աշխատակիցների, ներառյալ մարզի դատախազի տեղակալի ներկայությամբ:</p> <p>Դիմումատուն պնդում է որ ինքը ենթարկվել է խոշտանգումների, որոնց նպատակն է եղել ստիպել նրան տալ Ֆ-ի տված ինքնախոստովանական ցուցմունքին համապատասխան ցուցմունք առ այն, որ ինքն է բռնաբարել և սպանել ՄՍ-ին: Դիմումատուն հայտնում է, որ այն պահին երբ ինքը նստած է եղել աթոռին ձեռնաշղթաներով, երկու ոստիկաններ մետաղյա ամրակների օգնությամբ էլեկտրական հոսանք են միացրել իր ականջներին: Դիմումատուին նաև սպառնացել են հոսանք միացնել նրա սեռական օրգաններին:</p> <p>Ըստ դիմումատուի՝ չկարողանալով այլևս դիմանալ խոշտանգումներին, այն պահին երբ նա մի պահ դուրս է մնացել ոստիկանների ուշադրությունից նա վեր է կացել տեղից և ցատկել է պատուհանից դուրս, ոստիկանության բաժանմունքի բակ, ինքնասպանություն գործելու նպատակով: Նա վայր է ընկել ոստիկանության բակում կանգնած ոստիկանության մոտոցիկլետի վրա և կոտրել է իր ողնաշարը: Ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ նա անմիջապես տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ նա քննվել է բժշկի կողմից, որը հայտնաբերել է բազմաթիվ վնասվածքներ, որ առաջացել են նրա պատուհանից վայր ընկնելու հետևանքով: Վնասվածքները մասնավորապես ազդեցություն են ունեցել ողնաշարի և հենաշարժական համակարգի վրա:</p>
<p><b>19 Սեպտեմբեր 1998թ.</b></p>	<p>Դիմումատուի պատուհանից վայր ցատկելու օրը ՄՍ-ը վերադառնում է տուն ողջ և առողջ: Նա բացատրում է, որ սեպտեմբերի 8-ի գիշերը Դիմումատուն առաջարկել է նրան տեղափոխել իր մեքենայով և նա համաձայնել է: Երբ նրանք հասել են Նիժնի Նովգորոդ Դիմումատուն առաջարկել է նրան գիշերը անցկացնել իր մոտ, սակայն նա մերժել է նրա առաջարկը և Դիմումատուն թույլ է տվել նրան գնալ: ՄՍ-ը մի քանի օր է անցկացրել Նիժնի Նովգորոդում ապրող իր</p>

	ընկերների հետ առանց իր մորը տեղյակ պահելու թե որտեղ է հնքը գտնվում:
<b>21 Սեպտեմբեր 1998թ.</b>	Դիմումատուն պաշտոնապես կալանքից ազատ է արձակվում:
<b>22 Սեպտեմբեր 1998թ.</b>	Դիմումատուն ենթարկվում է ողնաշարի վիրահատության:
<b>25 Սեպտեմբեր 1998թ.</b>	Դիմումատուի նկատմամբ ՄՍ-ին բռնաբարելու և սպանելու հատկանիշներով հարուցված քրեական գործը պաշտոնապես կարճվում է: Սակայն Դիմումատուն դառնում է կասկածյալ մեկ այլ քրեական գործով, որի շրջանակներում նա մեղադրվում էր ՄՍ-ին առևանգելու մեջ:
<b>26 Հոկտեմբեր 1998թ.</b>	Կազմվում է դատաբժշկական փորձաքննության արձանագրություն որում հայտնաբերվում է որ դիմումատուն վնասվածքներ ունի գլխի շրջանում, ճանկրվածքներ ձակատին, և կծածի հետքեր լեզվի վրա:
<b>1 Մարտ 1999թ.</b>	Հետաքննությունը կապված անօրինական փամփուշտներ պահելու հետ պաշտոնապես կարճվում է, հիմնված այն հանգամանքի վրա, որ դրանց հայտնաբերման ժամանակ Դիմումատուն հանդիսացել է ոստիկանության աշխատակից և հետևաբար ունեցել է իրավունք ռազմամթերք ունենալու և պահելու:
<b>1 Մարտ 1999թ.</b>	Քրեական գործը կապված ՄՍ-ի առևանգման հետ նույնպես կարճվում է հիմնվելով այն հանգամանքի վրա որ Դիմումատուն ազատ է արձակել նրան, նրա իսկ պահանջով:
<b>2005թ.</b>	<p>Մեղադրանք է առաջադրվում երկու ոստիկանների դեմ, որոնք մասնակցել էին Դիմումատուի 1998 թվականի Սեպտեմբերի 19-ի հարցաքննությանը: Քրեական գործը ի վերջո փոխանցվում է Նիժնի Նովգորոդի Լենինսկի շրջանի դատարան, որը գտավ, որ ոստիկանության աշխատակիցները Դիմումատուին ենթարկել են էլեկտրական հոսանքի ազդեցությանը օգտագործելով սարք, որը միացված է եղել նրա ականջներին: Չկարողանալով դիմանալ ցավին Դիմումատուն փորձել է ինքնասպանություն գործել պատուհանից դուրս ցատկելու միջոցով: 2005 թվականի Նոյեմբերի 30 ոստիկանության աշխատակիցները մեղավոր են ճանաչվել Քրեական օրենսգրքի 286 հոդվածի «ա» և «բ» կետերի հատկանիշներով, պաշտոնական դիրքի չարաշահման՝ ուղեկցված բռնության գործադրմամբ, որը հանգեցրել է լուրջ հետևանքների, սակայն այս վճիռը դեռևս վերջնական չէր:</p> <p>Դիմումատուի ոստիկանության համակարգից հեռացումը հետագայում չեղյալ համարվեց և նա վերականգնվեց իր պաշտոնում: Պաշտոնատար անձինք, որոնք առնչություն ունեին նրա պաշտոնից հետին թվով հեռացնելուն ենթարկվեցին կարգապահական պատասխանատվության: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումատուն ամբողջովին հաշմանդամ էր դարձել նա ստիպված էր լքել պետավտոտեսչությունը:</p>

**Բ. Դիմումատուի գանգատը համաձայն Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի**

- Դիմումատուն բողոքում էր, որ լինելով ոստիկանության բաժանմունքում կալանքի տակ, հատկապես 1998 թվականի Սեպտեմբերի 19-ին Լենինսկի շրջանի ոստիկանության բաժանմունքում հարցաքննության ժամանակ, նա ենթարկվել տարբեր տեսակի անմարդկային վերաբերմունքի և խոշտանգումների, որը խախտում է Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:
- Դիմումատուն նաև բողոքում էր, որ իր խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի մասին հաղորդումից հետո արդյունավետ հետաքննություն չի իրականացվել, որը և խախտում է Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:
- Դիմումատուն բողոքում էր նաև, որ ներպետական օրենսդրության մեջ բացակայել են պաշտպանության արդյունավետ միջոցներ, կապված իր նկատմամբ կիրառված անմարդկային վերաբերմունքի և խոշտանգումների հետ, որը և խախտում է Եվրոպական Կոնվենցիայի 13-հոդվածը:

Աղյուսակ 2-ում ներկայացված են Դիմումատուի բողոքները ըստ Եվրոպական Կոնվենցիայի և Ռուսաստանի Դաշնության կառավարության առարկությունները՝ կապված Դիմումատուի կողմից Եվրոպական Դատարանին ներկայացված ենթադրյալ խախտումների հետ:

**Աղյուսակ 2**

Հոդվածները, որ ենթադրաբար խախտվել են	Դիմումատուի գանգատները	Ռուսաստանի Դաշնության կառավարության առարկությունները
<p>Եվրոպական Կոնվենցիայի հոդված 3-ը սահմանում է՝</p> <p>Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի:</p>	<p>ա) Դիմումատուն պնդում էր, որ գտնվելով ոստիկանության բաժանմունքում կալանքի տակ նա ենթարկվել է խոշտանգումների ոստիկանության աշխատակիցների կողմից, որոնք նպատակ ունեին այդ միջոցով նրանից կորզել ինքնախոստովանական ցուցմունք, որ ինքն է բռնաբարել և սպանել անչափահաս աղջկան: Դրա հետևանքով նա ցատկել է ոստիկանության</p>	<p>ա) Կառավարությունը նշում է, որ ներկա գործով քննությունը դեռևս ընթացքի մեջ է և ներպետական ատյաններում դեռևս չկա վերջնական որոշում: Այս առումով կառավարությունը պնդում է, որ Դիմումատուն չի սպառել ներպետական իրավական պաշտպանության միջոցները կապված իր նկատմամբ անմարդկային վերաբերմունք ցուցաբերելուն վերաբերող բողոքների հետ, որոնց</p>

	<p>բաժնի պատուհանից և կոտրել իր ողնաշարը:</p> <p>բ) Նա նաև նշում է իր գանգատում, որ իր նկատմամբ կիրառված ենթադրյալ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ քննությունը եղել է ոչ արդյունավետ: Մասնավորապես նա նշում է, որ Կառավարությունը խախտել է իր դրական պարտավորությունը Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համապատասխան չիրականացնելով իր գործով հետաքննություն: Դիմումատուն մատնանշում է պաշտոնական հետաքննության մեջ առկա բազմաթիվ թերությունները, ինչպես նաև հետաքննող մարմնի ոչ անկախ լինելը:</p>	<p>առնչությամբ ներկայացրել է իր գանգատը:</p> <p>բ) Կառավարությունը չի ներկայացրել որևէ այլ առարկություն կապված Դիմումատուի կողմից իր գանգատում նշված ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ խոշտանգում և անմարդկային վերաբերմունք դրսևորելուն:</p>
<p>Եվրոպական Կոնվենցիայի հոդված 13-ը սահմանում է՝</p> <p>Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:</p>	<p>Դիմումատուն իր գանգատում նշում է, որ ինքը չի ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց՝ իր նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ գանգատի առնչությամբ:</p>	<p>Կառավարությունը ներկայացրել է նույն առարկությունները, ինչ որ հոդված 3-ի խախտման վերաբերյալ:</p>

#### Գ. Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռը

Այդուսակ 3-ում ներկայացված է Դիմումատուի գանգատների և Ռուսաստանի Դաշնության Կառավարության առարկությունների վերաբերյալ Եվրոպական Դատարանի գնահատականը: Այդուսակում նաև բացատրված է

Եվրոպական Դատարանի վճիռը, ընդգծելով Դիմումատուի գանգատի և Եվրոպական Կոնվենցիայում ամրագրված իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ պատճառաբանությունները:

### Աղյուսակ 3

<b>ՀՈՂՎԱԾ 3-Ի ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄ (ԱՆԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ)</b>
<p><b>Դատարանը հղում կատարելով իր հաստատված նախադեպին նշեց՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հղում կատարելով <b><i>Klaas v. Germany</i></b> գործին, մտցնելով համապատասխան փոփոխություններ (<i>mutatis mutandis</i>) Դատարանը վերահաստատեց, որ անմարդկային վերաբերմունքի ենթարկված լինելու մասին հայտարարությունները պետք է ունենան համապատասխան ապացույցներ:</li> <li>• Անմարդկային վերաբերմունքի ենթարկված լինելու մասին հայտարարությունները գնահատելիս Դատարանը ապացուցված համարելու համար ընտրում է «առանց ողջամիտ կասկածի» չափանիշը: Սակայն, երբ խնդրո առարկա դեպքերը ամբողջովին կամ մեծ մասամբ գտնվում են իշխանությունների բացառիկ իրազեկության ոլորտում՝ ինչպես այն դեպքերում, երբ տվյալ մարդը գտնվում է նրանց վերահսկողության տակ մեկուսարանում, հիմնավոր կանխավարկած կարող է առաջանալ, որ վնասվածքները տեղի են ունեցել կալանքի տակ եղած ժամանակ: Այսօրինակ դեպքերում ապացուցելու պարտավորությունը կարող է դրվել իշխանությունների վրա, որպեսզի նրանք ներկայացնեն համոզիչ և բավարար բացատրություններ (<b><i>Salman v. Turkey</i></b>):</li> <li>• Այսօրինակ բացատրությունների բացակայության դեպքում Դատարանը կարող է հանգել իշխանությունների համար ոչ բարենպաստ եզրահանգումների (<b><i>Orhan v. Turkey</i></b>):</li> <li>• Որևէ հետաքննության ավարտի բացակայությունը ինքնին չի նշանակում, որ հետաքննությունը եղել է ոչ արդյունավետ՝ հետաքննություն կատարելու պարտավորությունը «միջոցների այլ ոչ թե արդյունքի պարտավորություն է» (<b><i>Paul and Audrey Edwards v. the United Kingdom</i></b>):</li> <li>• Բոլոր հետաքննությունները պարտադիր չէ, որ լինեն հաջողված, կամ հանգեն եզրակացության, որը համընկնում է Դիմումատուի ներկայացրած փաստերին, այնուամենայնիվ՝ այն պետք է իր բնույթով ի վիճակի լինի բերելու գործում առկա փաստերի ստուգմանը և եթե հաստատվի, որ դրանք համապատասխանում են իրականությանը՝ հավանական մեղավորների հայտնաբերմանը և պատժմանը: <i>mutatis mutandis</i>, (<b><i>Mahmut Kaya v. Turkey</i></b>)</li> <li>• Իշխանությունները միշտ պարտավոր են լուրջ ջանք գործադրել պարզելու թե ինչ է պատահել և չպետք է հիմնվեն հապճեպ կամ անհիմն եզրահանգումների վրա, որպեսզի ավարտեն հետաքննությունը, կամ հիմնավորեն իրենց որոշումը: (<b><i>Assenov and Others v. Bulgaria</i></b>)</li> <li>• Հետաքննությունը պետք է լինի պատշաճ:</li> <li>• Որպեսզի ենթադրյալ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարության հիման վրա սկսված հետաքննությունը համարվի արդյունավետ, այն պետք է</li> </ul>

լինի անկախ: (*Ճջur v. Turkey*)

**Գործի վերաբերյալ Ղատարանի գնահատականը**

Որպեսզի հնարավոր լինի գնահատել Դիմումատուի գանգատի արժանահավատությունը և հաշվի առնելով պնդումների բնույթը՝ Ղատարանը խնդրել էր Ռուսաստանի Ղաշնության կառավարությանը Ղատարանին ուղարկել քրեական գործի նյութերի պատճենները: Կառավարությունը հրաժարվեց դա անել, առանց բացատրելու թե ինչով կարող է դա վնասել գործի քննությանը կամ ներգրավված անձանց: Նրանք նաև հրաժարվեցին ներկայացնել որևէ ճշմարտանման բացատրություն թե ինչու նրանք չեն կարող ներկայացնել գործին վերաբերող փաստաթղթեր կամ ինֆորմացիա, որոնց նրանք անկասկած տիրապետում էին:

Այդ պատճառով Ղատարանը գտավ, որ պետք է քննի գործը հիմնվելով Դիմումատուի ներկայացրած փաստարկների և գործում առկա էլեմենտների և այն ապացույցների հիման վրա, որոնք ներկայացվել 2005 թվականի նոյեմբերի 30-ին Նիժնի Նովգորոդի Լենինսկի շրջանային դատարանում իրականացված դատաքննության ժամանակ:

Հետաքննության անարդյունավետության առնչությամբ Ղատարանը ի թիվս այլ հարցերի նշեց հետևյալը՝

- գործը կարճելու մասին քննիչների որոշումը վեր է հանել պաշտոնական հետաքննության էական բացթողումներ,
- հետաքննչական բազմաթիվ գործողություններ իրականացվել են, երբ բավականին ժամանակ արդեն անցել էր, ինչպես օրինակ դատաբժշկական եզրակացությունը թվագրված է ենթադրյալ անմարդկային վերաբերմունքից ավելի քան հինգ շաբաթ անց,
- մինչև 2000 թվականը քննության կատեցման վերաբերյալ որոշումները հիմնված էին համարյա նույնական փաստերի և եզրահանգումների վրա,
- բացահայտ կապ է եղել հետաքննության համար պատասխանատու պաշտոնատար անձանց և նրանց միջև, ովքեր ըստ Դիմումատուի նրան ենթարկել են անմարդկային վերաբերմունքի,
- ապացույցների հավաքման նկատմամբ դատախազության մոտեցումը եղել է ընտրովի և ոչ հետևողական:

Մասնավորապես Ղատարանը ցնցված էր քննիչների 1998 թվականի դեկտեմբերի 21-ի զեկուցագրում առկա փաստական անճշտություններից, որտեղ նշված էր, որ իբր Դիմումատուն ձերբակալվել է հասարակական կարգը խանգարելու համար, երբ արդեն պաշտոնապես հաստատվել էր, որ այդ ժամանակ նա արդեն ոստիկանության ձեռքում էր:

Ղատարանը շեշտում է, որ որպեսզի գործը հասնի դատարան պահանջվել է յոթ տարի: Նախաքննությունը կատեցվել և կրկին վերաբացվել է ավելի քան 15 անգամ և պարզ էր որոշ ժամանակահատվածներում նախաքննությունը կրել է զուտ ձևական բնույթ, խիստ կանխատեսելի արդյունքով:

**ՀՈՂՎԱԾ 3-Ի ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ  
(ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ)**

**Ղատարանը հղում կատարելով իր հաստատված նախադեպին նշեց՝**

- Իշխանությունները պարտավոր են պաշտպանել կալանքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը: Երբ որևէ անձնավորություն

կալանքի է վերցվում առողջ վիճակում բայց ազատվելու պահին պարզվում է, որ ունի վնասվածքներ, ապա դա պետության պարտավորությունն է ներկայացնել արժանահավատ բացատրություններ այն մասին թե ինչպես են առաջացել տվյալ վնասվածքները: (*Ribitsch v. Austria*)

### **Գործի վերաբերյալ Ղատարանի գնահատականը**

Ղատարանը հաշվի առավ, որ քննության ընթացքում դիմումատուն ներկայացրել է համակացված և մանրակրկիտ բացատրություններ թե ով է իրեն խոշտանգել և ինչպես: Նա ուներ նաև վկաներ, ովքեր հաստատում էին իր պնդումները և նրա լեզվի վրա հայտնաբերված կծածի հետքերը, որ նկարագրված էին դատաբժշկական փորձաքննության եզրակացության մեջ, կարող են դիտվել որպես անուղղակի հաստատում նրա պնդումների:

Հակառակն ապացուցող որևէ ապացույցի բացակայության պայմաններում Ղատարանը վճռեց, որ Դիմումատուն չունի որևէ հոգեկան թերություն, որը կարող էր ազդեցություն ունենալ նրա ինքնասպանություն գործելու մասին որոշում ընդունելու վրա: Նա ենթարկվել է սաստիկ լարված իրավիճակի ազդեցությանը, կասկածվելով այդչափ ծանր հանցագործություն կատարելու մեջ: Սակայն, որևէ արժանահավատ բացատրություն չի ներկայացվել թե ինչու նա, իմանալով՝ որ ինքը անմեղ է պետք է փորձեր ինքնասպան լինել, եթե նրա նկատմամբ ճնշում չի գործադրվել: Ավելին՝ Ղատարանը նշեց, որ տիրապետում է փաստերի, որ այլ ձերբակալվածներ նույնպես ենթարկվել են, կամ նրանց սպառնացել են որ կենթարկվեն, նմանատիպ անմարդկային վերաբերմունքի:

Հաշվի առնելով գործի հանգամանքները Ղատարանը պատրաստ էր ընդունել, որ կալանքի տակ եղած ժամանակ Դիմումատուն ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի, որոնք նպատակ են ունեցել նրանից կորզել ինքնախոստովանական ցուցմունք կամ ինֆորմացիա, կապված հանցագործությունների հետ որոնցում նա մեղադրվում էր: Նրա նկատմամբ դրսևորված անմարդկային վերաբերմունքը այնքան ծանր ֆիզիկական և հոգեկան տառապանքներ է պատճառել դիմումատուին, որ նա փորձ է կատարել ինքնասպանություն գործել, ինչը հանգեցրել է ընդհանուր և մշտական հաշմանդամության:

## **ՀՈՂՎԱԾ 13-Ի ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ**

### **Ղատարանը հղում կատարելով իր հաստատված նախադեպին նշեց՝**

- Եվրոպական Կոնվենցիայի հոդված 13-ը պահանջում է, որ երբ առկա է Եվրոպական Կոնվենցիայի մեկ կամ մի քանի հոդվածների խախտման վերաբերյալ պնդում, տուժողը պետք է հնարավորություն ունենա օգտվելու մի մեխանիզմից որը կբերի պետական պաշտոնյաների տվյալ խախտման մեջ մեղք ունենալու փաստի հաստատմանը կամ հերքմանը: Պայմանավորվող կողմերը ունեն որոշակի ազատություն այն մեթոդներում թե նրանք ինչ ճանապարհով կիրականացնեն Եվրոպական Կոնվենցիայի սույն հոդվածով ստանձնած պարտավորությունները: (*Kudła v. Poland*).
- Պետությունների 13-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների շրջանակը կարող է տարբերվել կապված Դիմումատուի զանգառի բնույթից և որոշ դեպքերում Եվրոպական Կոնվենցիան նախատեսում է, որ պետք է տրամադրվի որոշակի պաշտպանության միջոց: Հետևաբար, կասկածելի մահվան կամ անմարդկային վերաբերմունքի դեպքում, հաշվի առնելով

հողվածներ 2-ի և 3-ի առաջնային կարևորությունը՝ հողված 13-ը (բացի համապատասխան դեպքերում վճարվող փոխհատուցմանը) պահանջում է, որ իրականացվի համակողմանի և արդյունավետ քննություն, որը կարող է հանգեցնել մեղավորների հայտնաբերմանը և պատժմանը: (*Anguelova v. Bulgaria*)

Դատարանը գտավ, որ Դիմումատուն զրկված է եղել իր նկատմամբ ոստիկանության կողմից անմարդկային վերաբերմունք դրսևորելու մասին բողոքների բավարար չափով արդյունավետ քննությունից, և հետևաբար նա զրկված է եղել որևէ այլ առկա իրավական պաշտպանության միջոցից, ներառյալ փոխհատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

**Աղյուսակ 3**

ԵՆԹԱԴՐՎԱԾ ԽԱՆՏՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՍԸ	ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐԸ
Հողված 3	Դատարանը <i>միաձայն</i> վճռեց, որ առկա է Եվրոպական Կոնվենցիայի <b>3-րդ հողվածի</b> խախտում կապված ոստիկանության բաժանմունքի պատուհանից 1998 թվականի սեպտեմբերի 19-ին Դիմումատուի վայր ընկնելու փաստի առիթով արդյունավետ քննություն չանցկացնելու հետ:
Հողված 3	Դատարանը <i>միաձայն</i> վճռեց, որ առկա է Եվրոպական Կոնվենցիայի <b>3-րդ հողվածի</b> խախտում կապված ոստիկանության բաժանմունքում Դիմումատուի նկատմամբ իրականացված անմարդկային վերաբերմունքի հետ:
Հողված 13	Դատարանը <i>միաձայն</i> վճռեց, որ առկա է Եվրոպական Կոնվենցիայի <b>13-րդ հողվածի</b> խախտում կապված գանգատում նշված անմարդկային վերաբերմունքի փաստի առիթով արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի բացակայության հետ:
<p><b>Նյութական վնաս</b></p> <p>Դիմումատուն պահանջում էր <b>23,562,500 ՌՌ</b> որպեսզի ծածկի բժշկական ծախսերը մինչև 65 տարեկան:</p> <p>Հիմնվելով Ռուսաստանի Դաշնությունում միջին աշխատավարձի վերաբերյալ պաշտոնական</p>	<p>Դատարանը վճռեց, որ հաշվի առնելով Դիմումատուի վիճակի ամբողջ լրջությունը, այն փաստը, որ նա կարիք ունի մասնագիտական և շարունակական բուժման և նրա՝ ապագայում աշխատելու անկարողության հանգամանքը, Դատարանը այս մասով նրան տրամադրում է <b>130,000 Եվրո</b>, գումարած այն բոլոր հարկերը, որ կարող են գանձվել այս գումարից:</p>

<p>վիճակագրության վրա, համապատասխան ժամանակահատվածում՝ Դիմումատուն պահանջում էր <b>2,736,384 ՌՌ</b>, որպես կորցրած եկամուտ և <b>513,072 ՌՌ</b> որպես իր մոր կորցրած եկամուտի փոխհատուցում:</p> <p>Ընդհանուր առմամբ Դիմումատուն պահանջում էր <b>27,351,812 ՌՌ</b> որպես նյութական վնասի փոխհատուցում, որը ներկա պաշտոնական փոխարժեքով կազմում է մոտ <b>794,000 Եվրո</b>:</p>	
<p><b><u>Ոչ նյութական վնաս</u></b></p> <p>Դիմումատուն նշել է, որ ոստիկանության բաժանմունքում ինքը ենթարկվել է խոշտանգումների էլեկտրոդների միջոցով, որը առաջացրել է հոգեկան և ֆիզիկական մեծ տառապանքներ</p> <p>Հիմնվելով այս հանգամանքի վրա Դիմումատուն պահանջել էր <b>22,530,000 ՌՌ</b> որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում (մոտ <b>654,000 Եվրո</b>):</p>	<p>Հաշվի առնելով Դիմումատուի վրա 1998 թվականի սեպտեմբերի 19-ի միջադեպի թողած բացառիկ ծանր հետևանքները՝ Դատարանը նրան տրամադրում է <b>120,000 Եվրո</b>, որպես փոխհատուցում նրա կրած ոչ նյութական վնասի համար, գումարած այն բոլոր հարկերը, որ կարող են գանձվել այս գումարից:</p>

**ՄԱՍ II. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ հոդված 3-ը չի նախատեսում որևէ բացառություն և թույլ չի տրվում դրանից որևէ շեղում պատերազմական դրության կամ հատուկ դրության պայմաններում Եվրոպական Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն: Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի՝ Կոնվենցիայով նախատեսված այս բացարձակ արգելումը ցույց է տալիս, որ հոդված 3-ով պաշտպանվող իրավունքները հանդիսանում են ժողովրդավարական հասարակությունների, որոնցից կազմված

է Եվրոպայի Խորհուրդը, ամենակարևոր արժեքներից մեկը: Այս դրույթը ներառված է նաև այլ միջազգային փաստաթղթերում, ինչպես օրինակ 1966 թվականի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային համաձայնագրում, 1969 թվականի Մարդու իրավունքների Ամերիկյան կոնվենցիայում, 1981 Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան խարտիայում և այն ընդունված է որպես համընդհանուր չափանիշ:<sup>1</sup>

*Միխեեվն ընդդեմ Ռուսաստանի* գործում Եվրոպական Դատարանը ևս մեկ անգամ ընդգծեց մի քանի կարևոր հարցեր կապված **հոդված 3-ի (խոշտանգումների արգելում)** խախտմանը վերաբերող գանգատներին, մասնավորապես «արդյունավետ քննություն» հասկացությանը՝ վերաբերող ենթադրյալ անմարդկային վերաբերմունքին:

I. Դատարանը ևս մեկ անգամ նշեց, որ անմարդկային վերաբերմունքի ենթարկված լինելու մասին հայտարարությունները պետք է ունենան համապատասխան ապացույցներ:<sup>2</sup> Անմարդկային վերաբերմունքի ենթարկված լինելու մասին հայտարարությունները գնահատելիս Դատարանը ապացուցված համարելու համար ընտրում է «առանց ողջամիտ կասկածի» չափանիշը: Սակայն, երբ խնդրո առարկա դեպքերը ամբողջովին կամ մեծ մասամբ գտնվում են իշխանությունների բացառիկ իրազեկության ոլորտում՝ ինչպես այն դեպքերում երբ երբ տվյալ մարդը գտնվում է նրանց վերահսկողության տակ՝ մեկուսարանում, հիմնավոր կանխավարկած կարող է առաջանալ, որ վնասվածքները տեղի են ունեցել կալանքի տակ գտնվելու ժամանակ: Այսօրինակ դեպքերում ապացուցելու պարտավորությունը կարող է դրվել իշխանությունների վրա որպեսզի նրանք ներկայացնեն համոզիչ և բավարար բացատրություններ:<sup>3</sup> Եվ ամենակարևորը, որ այսօրինակ բացատրությունների բացակայության դեպքում Դատարանը կարող է հանգել իշխանությունների համար ոչ բարենպաստ եզրահանգումների:<sup>4</sup>

II. Որևէ հետաքննության ավարտի բացակայությունը ինքնին չի նշանակում, որ հետաքննությունը եղել է ոչ արդյունավետ՝ հետաքննություն կատարելու պարտավորությունը «միջոցների այլ ոչ թե արդյունքի պարտավորություն է»:<sup>5</sup> Բոլոր հետաքննությունները պարտադիր չէ, որ լինեն հաջողված, կամ հանգեն եզրակացության, որը համընկնում է Դիմումատուի ներկայացրած փաստերին, այնուամենայնիվ՝ հետաքննությունը պետք է իր բնույթով ի վիճակի լինի բերելու գործում առկա փաստերի ստուգմանը և եթե հաստատվի, որ դրանք համապատասխանում են իրականությանը՝ հավանական մեղավորների հայտնաբերմանը և պատժմանը:<sup>6</sup>

III. Անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ քննությունները պետք է լինեն լիակատար: Սա նշանակում է, որ իշխանությունները միշտ պարտավոր են լուրջ

<sup>1</sup> Տես *Սոնրինգն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1989 թ. հուլիսի 7, ՄԻԵԴ պարբերական, հատոր Ա, 161, պար. 88

<sup>2</sup> *Mutatis mutandis* *Կլասսն ընդդեմ Գերմանիայի* վճիռը, 1993 թ. սեպտեմբերի 22, ՄԻԵԴ պարբերական, հատոր Ա, համար 269, էջ 17-18

<sup>3</sup> *Սալմանն ընդդեմ Թուրքիայի*, համար. 21986/93, 100, ՄԻԵԴ 2000-VII

<sup>4</sup> *Օրհանն ընդդեմ Թուրքիայի*, համար 25656/94, 274, 18 հունիս 2002

<sup>5</sup> *Պոլ և Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության*, համար. 46477/99, 71, ՄԻԵԴ 2002-II

<sup>6</sup> *Mutatis mutandis*, *Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի*, համար 22535/93, 124, ՄԻԵԴ 2000-III

ջանք գործադրել պարզելու թե ինչ է պատահել և չպետք է հիմնվեն հապճեպ կամ անհիմն եզրահանգումների վրա, որպեսզի ավարտեն հետաքննությունը, կամ հիմնավորեն իրենց որոշումը:<sup>7</sup>

**IV.** Կառավարությունը, իր հնարավորությունների սահմանում պետք է կատարի բոլոր ողջամիտ քայլերը որպեսզի ապահովի միջադեպին առնչվող ապացույցների պահպանությունը, որոնք կարող են ներառել վկաների ցուցմունքները, դատաբժշկական վկայությունները և այլն:<sup>8</sup> Քննության ընթացքում որևէ թերություն, որը կարող է խոչընդոտել վնասվածքների պատճառի պարզմանը կամ դրանց մեղավորներին հայտնաբերմանը՝ կհամարվի նշված չափանիշին չհամապատասխանող:

**V.** Դատարանը ևս մեկ անգամ նշում է, որ հետաքննությունը պետք լինի նպատակահարմար և բողոքների վերաբերյալ իշխանությունների արձագանքման արագությունը գնահատելիս ուշադրություն է դարձվում քննությունը սկսելուն, բացատրություններ վերցնելու ընթացքում ձգձգումներին, ժամանակին, որ ծախսվել է նախնական քննության վրա:

**VI.** Դատարանը կրկնում է, որ որպեսզի ենթադրյալ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարության հիման վրա սկսված հետաքննությունը համարվի արդյունավետ, այն պետք է լինի անկախ:<sup>9</sup> Քննությունը կհամարվի ոչ անկախ եթե նույն բաժանմունքի կամ ստորաբաժանման անդամները, որոնք մատնանշվել են որպես ենթադրյալ անմարդկային վերաբերմունքի մեղավորներ, իրականացնում են քննությունը:<sup>10</sup> Քննության անկախությունը նշանակում է ոչ միայն ծառայողական կամ գերատեսչական կապի բացակայություն, այլ նաև անկախություն գործնական առումով:<sup>11</sup>

**VII.** Ինչ վերաբերում է ենթադրյալ խոշտանգումների կամ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարություններին, Դատարանը կրկնում է, որ իշխանությունները պարտավոր են պաշտպանել կալանքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը: Երբ որևէ անձնավորություն կալանքի է վերցվում առողջ վիճակում բայց ազատվելու պահին պարզվում է, որ ունի վնասվածքներ, ապա դա պետության պարտավորությունն է ներկայացնել արժանահավատ բացատրություններ այն մասին թե ինչպես են առաջացել տվյալ վնասվածքները:<sup>12</sup>

**VIII.** Հոդված 13-ի վերաբերյալ Եվրոպական դատարանը վերահաստատեց, որ Եվրոպական Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է, որ երբ առկա է Եվրոպական Կոնվենցիայի մեկ կամ մի քանի հոդվածների խախտման վերաբերյալ պնդում, տուժողը պետք է հնարավորություն ունենա օգտվելու մի

<sup>7</sup> *Սաանվոր և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*, վճիռը, 1998 թ. հոկտեմբերի 28, ՄԻԵԴ պարբերական, 1998-VIII, 103

<sup>8</sup> *Mutatis mutandis*, *Սալմանն ընդդեմ Թուրքիայի*, 106, ՄԻԵԴ 2000-VII

<sup>9</sup> *Օգյուրն ընդդեմ Թուրքիայի*, համար 21954/93, ՄԻԵԴ 1999-III, 91-92

<sup>10</sup> *Գյուլնչն ընդդեմ Թուրքիայի* վճիռը, 1998 թ. հուլիս 27, պարբերական 1998-IV, 80-82

<sup>11</sup> *Էրգին ընդդեմ Թուրքիայի* վճիռը, 1998 թ. հուլիս 28, պարբերական 1998-IV, 83-84

<sup>12</sup> *Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի* վճիռը, 1995 թ. դեկտեմբերի 4, ՄԻԵԴ պարբերական, հատոր Ա, համար 336, 34

մեխանիզմից որը կբերի պետական պաշտոնյաների տվյալ խախտման մեջ մեղք ունենալու փաստի հաստատմանը կամ հերքմանը: Պայմանավորվող կողմերը ունեն որոշակի ազատություն այն մեթոդներում թե նրանք ինչ ճանապարհով կիրականացնեն Եվրոպական Կոնվենցիայով սույն հոդվածով ստանձնած պարտավորությունները, ներպետական պաշտպանության միջոցների համակցությունը նախատեսված օրենսդրությամբ նույնպես կարող է դիտվել բավարար:<sup>13</sup>

---

<sup>13</sup> Կոռլյան ընդդեմ Լեհաստանի, համար 30210/96, 157, ՄԻԵԴ 2000-XI